



## 27. ԶՈՒԹՉԻ

Ավալ ժամանակին ըլնում ա շիլնում մի մարդ, մի կնիկ: Եղ մարդը չութչի ա ըլնում: Դրանք ունենում են մի մինուճար տղա:

Օրեն մի օրը էդ Չութչին չութը վեր ա ոմում, էթում հանդը լութ անելու: Չութ անելիս բիրդան չթի սամիքը կոտրվում ա. մնում ա մաթալ, էլ չի կարում չութ անի, փոր-փոշման եղ ա դառնում, գալի տուն:

Էթում ա իրա ընկորտանցը իմաց ա տալի, թե.— էգուց էկեր իրար հեննա էթանք մեշեն, սամու փետ բերենք:

Չութշու տղեն էս որ իմանում ա, գալիս ա, հորն ասում.— Ա՛յ հեր, մի՛ էթա, փորձանք կզա զլուխդ. ֆլա՛ն օրը, ֆլա՛ն վախտը ընե՞նց մի անձրև պտի գա, ընե՞նց մի բուք ու բորան պտի անի, որ աստօծ փրկի, աղատի:

— Ա՛յ որդի, — ասում ա հերը, — ախար ո՞նց կըլնի, խալսին ե՞ս եմ իմաց տվե, զլխահան արե, ես որ չէթամ՝ ամոթ չի:

— Ա՛յ հեր, — ասում ա, — քու ի՞նչ բանն ա. ես նրանց ջուղարը կտամ, դու իրիկունք թեք ընկի, քնի՛:

— Ա՛յ որդի, — ասում ա հերը, — որ ասում ես՝ էլ ի՞նչ ասեմ. թո՞ղ քու ասածն ըլնի:

Իրիկունք թեք ա ընկնում, քնում:

Էն զլխեն, լը՛խկ հա լըխկ, լը՛խկ հա լըխկ, թը՛խկ հա թըխկ.

դուռը ծեծում են: Տղեն սուս ու փուս վեր ա կենում, շուկան քցում պլեն, դուս գալի:

— Ո՞վ եք,— ձեն ա տալի:

— Մենք ենք,— ասում են,— դուռը բա՛ց արա:

Տղեն դուռը բաց ա անում, տենում իրա հոր ընկերտինքը:

— Հերդ տա՞նն ա,— հարցնում են:

— Բա չե՞ք ասի,— ասում ա,— հերս էրեկ իրիկուն ամեն բան հազրե, դրել էր խուրչինը, համա բիրդան հիվանդացավ. էս սհաթին էլ հրեն թեք ընկած ա, որ ասես ուշ չկա վրեն: Բան չկա,— ասում ա,— դուք էս հետ գնացեք, մըն էլ որ էթալու կըլնեք՝ կգա:

Տղեն դրանց ջուղար ա անում, ինքը թողում ա, գալի տուն:

Հերը հարցնում ա.— Հը՛, ա՛յ որդի, ընկորտանցս ճամփու դրի՛ր:

— Հա՛,— ասում ա,— ճամփու դրի. դու արխեին թեք ընկի, քնի՛:

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՛ մի շաբթ, զրուստ որ էդ տղի ասած օրը ընե՛նց մի բուք ու բորան ա անում, ընե՛նց մի անձրև ա գալի, որ տանից դուս էկողի բերան-մերանը կպնում էր<sup>1</sup>: Մի քանի օրեն ետը մեշա գնացողներից մինը ընդիան գալիս ա գեղը, ջուղար բերում, թե՛ ըսե՛նց, ըսե՛նց բան, ֆլա՛ն օրը ընե՛նց մի բուք ու բորան արեց, ընե՛նց մի անձրև էկավ, ընենց մի ալեկործում արեց, որ իրա ընկերտինքը քոմմա փետացան. ինքն էլ մի հալով պրծել էր, վե կացե, էկե, անշախ իրան քցե գեղը: Էդ Զութշին էս բանը որ իմանում ա, վեր ա կենում տղի ջուկստ թուշը պաշում:

— Զորա՛նաս, ա՛յ որդի,— ասում ա,— դու ինձ պրծացրիր էդ զուկումիցը. դու լըլնեիր, ես էլ նրանց հեննա ֆողեց-ֆոգի պտի կորչեի:

Տղեն ըսենց մի քանի հետ հորը փորձանքից աղատում ա: Դրանց գեղի կշտին մի մենծ գետ կար. էդ գետի դրաղին դրանք ֆող ունեին. օրեն մի օրը հեր ու տղա վե կացան գնացին էդ փողը վարելու: Դրանց գեղիցը էդ օրը մի քանի շահել-ջուհու վեր ին կացե, գնացե էդ գետը ձուկ կալնելու: Տենում են, ըհը՛, հրեն թագավորը

<sup>1</sup> Տպագիր տեքստում հաշորդում է՝ իրաց, որը բանահագարի ձեռքած է (Ս. Կ.):

իրա նազիր-վեղրի հեննա էկավ ըտերանք ման գալու էդ թռութեց-  
իրեք լավ ձուկն ին կալե. բերում են տալի թագավորին փեշքաշ:  
Թագավորն էլ վեր ա ունում, տալի նազրին.

— Ա՛ռ,— ասում ա,— էս ձկները տա՛ր, տո՛ւ աղջկանս, զաթի  
իրանդ ա, բալի սիրու ուզում ա, թո՛ղ խաշիլ տա՛ ուտի:

էս նազիրն ա՝ ձկները վեր ա ունում, բերում թագավորի ամա-  
րաթը. դնում ա մի էրծաթե սինու մեջ, տանում ա տալի թագավորի-  
աղջկանը:

Աղջիկը որ տենում ա, հարցնում ա.— էդ ձկները է՞գ են, թե  
որք:

— Թագավորի աղջիկը սաղ ըլնի, ո՞րծ են, — ասում ա նա-  
զիրը:

— Դե՛ն տարեք, կորցրե՛ք, — ասում ա աղջիկը, — շե՞ք գիտա-  
որ ես ըսկի ործեղենի էրես չեմ ուզում տենամ, որ մնաց ուտեմ:

Ձկները էս խոսքը որ լսում են, իրեքն էլ վեր են կենում, պոշ-  
ների վրեն կաննում, ծիծաղում, էլ եղ շրբիալեն վեր ընկնում:  
Թագավորի աղջիկը, նազիրը քոմմա մնում են արմացած, թե՝ էս  
ի՞նչ բաս ա, նազիրը վեր ա ունում էդ ձկները, տանում դնում մի-  
տուար, պահում. ինքն էլ վեր ա կենում, էթում թագավորին մին-  
մին նազլ անում, թե՝ ըսե՛նց, ըսե՛նց բան:

Թագավորը էս որ լսում ա, բերանը մնում ա բաց: Եննա նազ-  
րին հրամայում ա.— Տա՛ր,— ասում ա,— էդ ձկները մի թաքռե-  
տեղ պահա՛. ես, ոնց ըլնի, պտի իմանամ էս ի՞նչ բաս ա, էդ ձըկ-  
ները իմ՝ ին ծիծաղում:

Թագավորը եննա եղ ա դառնում սուս ու փուս իրա ամարաթը:  
Անց ա կենում մի վախտ՝ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս,  
մախլասի՝ մի տարի, օրեն մի օրը թագավորի աղջիկը կանչում ա-  
նազրին:

— Կէթաս,— ասում ա,— սաղ մեր մհալը ման կգաս, կհարց-  
նես, կտենաս որդե իմ անումը չեն տալի, ինձ չեն ճանանշում,  
կգաս կասես, որ ես ընդե մարդի էթամ:

— Լա՛վ, — ասում ա նազիրը— Ճամփի թագարեք ա տենում,  
վե կենում, ընկնում ճամփա:

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիշն աստոծ գիտա,  
հասնում ա մի գեղի Դուս ա գալի հանդը, տենում հրես մի ծեր  
մարդ, մըն էլ մի ջահել տղա չութ են անում:

— էթամ նրանց կուշտը, — ասում ա, — մի քիչ դինջանամ, հաց-մաց ուտեմ, էլ եղ վե կենամ էթամ իմ ճամփեն:

էդ շութ անողն էլ էն Զութշին ա ըլնում, որ մի իմաստուն տղա ա ոմենում:

էդ իմաստուն տղեն թագավորի նազրին որ տենում ա, հորն ասում ա. — Այ հեր, հրես տենում ես, թագավորի նազիրը դալիս ա. որ գա քեզ բան հարցնի՝ ջուղար տո՛ւ. մարդ ա, որ ինձ էլ բան հարցնի, ես ի՞նչ ասեմ՝ լրարկանաս:

— ևա՛վ, — ասում ա, — այ որդի, դու գիտաս, ի՞նչ ուզում ես ա՛սա:

թագավորի նազիրը գալիս ա, համանում դրանց:

— թարի աջողում, բա՛րի, — ասում ա նազիրը, — ի՞նչ կա, ի՞նչ չկա. քեֆնե՛րդ, հալնե՛րդ, ո՞նց եք, ի՞նչ եք անում:

— Զանսաղությո՛ւն, թագավորի նազիրը սաղ ըլնի, — ասում ա Զութշին, — կանք, ապրում ենք, է՛լի: Խեր ըլնի, բա դո՛ւ էդ ուր ես էթում, — հարցնում ա:

— էթում եմ մեր մհալը պտտեմ, տենամ ի՞նչ կա, ի՞նչ չկա. թագավորիցը խալխը հո գանգատավոր շե՞ն:

— թագավորի նա՛զիրը սաղ ըլնի, — ասում ա Զութշու տղեն, — զուր ես շարշարվում. ինչքամ էկել ես՝ տասն էսքամ էլ էթաս հալա թագավորի աղջկա անումը կա. զուր տեղը մի՛ էթա, ե՛դ դառ, զնա՛քու բանին. դու էլ ես մեղք, ձիդ էլ:

թագավորի նազիրը տղի էս ջուղարը որ լսում ա, մնում ա դարմացած. փոր-փոշման եղ ա դառնում, գալի: Գալիս ա թագավորի աղջկանը մին-մին նազլ անում թե՛ ըսե՞նց, ըսե՞նց, ըսե՞նց բան, ֆլա՛ն տեղը մի Զութշի կար, նրա տղեն ըսենց ջուղար տվեց:

թագավորի աղջիկը էս որ լսում ա, մնում ա միտք անելոն, թե էս ի՞նչ բաս ա, էն տղեն խի՛ պտի ընենց ասեր:

Անց ա կենում մի բանի վախտ, էս թագավորի աղջիկը զաստահիվանդ ա տալի: Աշխարքումը ինչքամ զլովս հերիմ ա ըլնում՝ թագավորը բերիլ ա տալի՝ աղջիկը շի լավանում: Օրեն մի օրը էս աղջիկը հորը կանչիլ տվեց իրա կուշտը:

— թագա՛վորը սաղ ըլնի, — ասեց, — բա շես ասի՛ էս գշեր էրազումս տեհա՛ մեր տերտերն էկավ, ասեց. «Այ որդի, քու դեղ ու դարմանը ի՞նչ մենծ բան ա, որ շեք անում. քանի ամիս ա՛ հիվանդ, տեղ ու բարձով թեք ընկած ես. շէ՛ դու էլ մեղք ես, շահել-

շիվան ես, աչքդ մուրազի ա: Ֆլա՛ն գեղումն,— ասեց.— մի Չութշիկա, էղ Չութշին մի մինումար տղա ունի, պտի էն տղին մորթեք, արինք խմես, որ լավանասա:

— Ա՛յ որդի, — ասում ա թագավորը; — ախար ես ո՞նց բերիլ տամ էդ տղին, իլլաթիմ որ մինումար ա:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա աղջիկը, — թե ուզում ես սաղանամ՝ պտի բերիլ տաս, թե չէ հո՛ դո՛ւ զիտաս:

Թագավորը միտք ա անում, միտք ա անում, տենում ա, որ ճար չկա, պտի էն տղին բերիլ տա, բալի աղջիկը լավանա: Կանչում ա իրա նազրին:

— Մի բեռը ոսկի վե կունես, — ասում ա, — կէթաս ֆլա՛ն գեղը, ընդի մի Չութշի կա, նա մի տղա ունի, էդ բեռը ոսկին կտաս նրան, տղեն կառնես, կբերես, որ մորթենք, աղջիկս նրա արինք խմի, լավանա:

Նազիրը մատը կծում ա: Թագավորին զլուխ ա տալի, դուազայի: Էզսի օրը ճամփի թագարեք ա տենում, վե կենում, ընկնում ճամփատ:

Չութշու տղեն դե իմաստուն էր, է՛լի, էս բանը իմանում ա: Դալիս ա հորը ասում. — Ա՛յ հոր, թագավորը իրա նազրին զրկել ա, որ զա քեզ մի բեռը ոսկի տա, ինձ առնի, տանի թագավորի աղջկա հմար: Որ կզա, — ասում ա, — մի՛ վախի, ոսկին ա՛ռ, ինձ տո՛ւ, տանի: Արխեին կա՛ց, — ասում ա, — որ ասես, ինձ բան չիլ-նի, ոնց բնի սաղ-սալամաթ էլ եդ կզամ:

Թագավորի նազիրն ա՝ գալիս ա, գալիս ա, շատն ու քիշն աստոծ զիտա, հասնում ա թագավորի ասած գեղը: Սրան, նրան հարցնելոն էդ Չութշու տունը գտնում ա, էթում նրա կուշտը:

— Բարո՛վ, բարի՛, — ասում ա նազիրը:

— Բարո՛վ, ասսու հազար բարին, — ասում ա Չութշին, — խեր քլնի, խի՞ ես էկե, — հարցնում ա:

— Էկել եմ, — ասում ա, — տղիդ տանեմ, թագավորը ուզել ա. Հրես էս մի բեռը ոսկին էլ քեզ փեշքաշ ա զրկե:

— Տա՛ր, փեշքաշ ա, — ասում ա Չութշին, — տղի մալիաթն ինչ ա, որ թագավորիցը խնայեմ, — ասում ա, տղի կուռը բռնում, տալի նազրին:

Նազիրն ա՝ մի բեռը ոսկին տալիս ա Չութշուն, տղին քաշում թարքը՝ յա՛լա: Գալիս ա, գալիս ա, շատն ու քիշն աստոծ զիտա,

հասնում ա թագավորի ամարաթը: Նազիրը չի զմշում, որ էդ թագուր գյողալ տղին մորթեն. Էլ չի տանում թագավորի կուշտը, բերում ա, իրանց տանը պահում: Էդ նազրի կնիկը տեսնում ա' մարդը դառը-տխուր նստած ա:

— Ա՛յ մարդ,— հարցնում ա,— խի՞ ես ըտենց մալուկ-մաշկ-յուկ նստե, ասա տեսնամ դարտդ ի՞նչ ա:

— Տենո՞ւմ ես էս տղին, ա՛յ կնիկ,— ասում ա նազիրը,— պտի մորթենք, որ ինչ ա թագավորի թարառուկ աղջիկը սրա արինը խմի, լավանա:

— Տնա՛շեն,— ասում ա կնիկը,— էդ ի՞նչ ա, որ դրա հմարդարտոտե, վարամնոտե նստել ես. Հրեն մեր հարևանի տղին էս մի սհաթ լիլնի, որ տարան թաղեցին, եղ զառան. Էս գշեր զնա նրա գերեզմանը քանդա, հանա՛, գլուխը կտրա՛, բե՛, եննա մի ոչխար մորթա՛, արինը լցրա՛ մի ամանի մեջ, էս տղի շորերն էլ արնոտարա՛, տա՛ր թագավորի աղջկանը շանց տո՛ւ, ա՛սա. ևՄորթել եմ, արինն էլ հրես բերե» նրանք շատ գիտա՞ն, թե էդ ընչի արին ա:

— Զորա՞նաս, ա՛յ կնիկ,— ասում ա,— լավ խելք սարվացրիր. ըտենց էլ կանեմ:

Էդ նազիրը կես գշերին վեր ա կենում էթում գերեզմանները, ման գալի, կնկա ասած էրեխի գերեզմանը գտնում, քանդում, հանում, գլուխը կտրում վլրիցը, էլ եդ դնում տեղը, ֆորում ու յա՞լա՞ դպա տուն ա կրնկում: Գալիս ա տուն, մի ոչխար ա մորթում, մի խոր աման լիքը էդ ոչխարի արնիցը վեր ունում, էդ տղի հին-մին շորերը հանում ա, թաթխում արինի մեջը, առավոտը գշերով-գշեր-հանա էդ շորերն ու գլուխը վեր ա ունում, տանում դուզ թագավորի աղջկա կուշտը:

— Թագա՞վորի աղջիկը սադ ըլնի,— ասում ա,— էրեխուն ինչ-քամ բշտեցի, հեննեն կռվեցի՝ ճար, իլլաճ շէլավ, շէկավ, ես էլ վեկալա ճամփին մորթեցի. Հրես էս ա՛րինը, էս գլո՛վար, ըս էլ շո՛րերը:

Թագավորի աղջիկը վեր ա ունում արինը խմում, ասում.— Օխա՞յ, անջախ մի սիրտս հովացավ:

Անց ա կենում մի վախտ, օրեն մի օրը թագավորը կանչում ա իրա նազրին:

— Մի շաբաթ քեզ մհուլ,— ասում ա,— պտի իմանաս՝ էն ձկները, որ բերիր տվիր աղջկանս, խի՞ ին ծիծազում, գրանով ի՞նչ ին ուզում ասի:

— Աշքիս վրեն, թագա՛վորը սաղ ըլնի, — ասում ա նազիրը:  
Թագավորին զլուխ ա տալի, թողում դուս գալի: էթում ա իրանց  
տումը, էլի դառը-տխուր, նոթերը կիտած նստում ա:

Չութչու տղեն էս որ տենում ա, հարցնում ա. — Բի՛ձա, —  
ասում ա, — խի՛ ես ըտենց նոթերդ կիտե, ա՛սա տենամ դարտո  
ի՛նչ ա:

— է՛լ, ա՛լ որդի, — ասում ա, — էս քեզ ասեցի, իմ դարտին  
ի՛նչ զարման պտի անես:

— է՛լի հենց, ա՛սա տենամ, բալի իմ խելքն էլ ա մի բան  
կարում:

Նազիրը ըստե նստում ա մին-մին տղին նազլ անում թագա-  
վորի հրամանը:

Տղեն էս որ լսում ա, ասում ա. — Էդ ի՛նչ մի դժար բան ա,  
որ դրա հմար դարտ ես անում. մի՛ վախի, ես դրա ջուղարը կտամ:

— Ղո՞րթ, — հարցնում ա նազիրը:

— Ղո՞րթ, — ասում ա տղեն. — թագավորը թող ինձ կանչի, էն  
հ'ս զիտամ ինչ որ կասեմ:

Նազիրը էս որ լսում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլ-  
ճում: էպսի օրը էթում ա թագավորին զլուխ տալի, ընդէ կաննում:

— Հը՛, ի՛նչ խարար ա, — հարցնում ա թագավորը, — ինչ որ  
հարցրել ի՛ գտա՛ր, թե չէ:

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, — ասում ա, — գտա:

— Դե ա՛սա տենամ, — ասում ա թագավորը:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա, — ես չեմ ասողը.  
մեր տանը մի ջաճել տղա կա, նա պտի ասի. թե կհրամայես, էթամ  
գերեմ:

— Դնա կանչա՛ գա, — ասում ա թագավորը:

Նազիրը էթում ա էն իմաստուն տղի կոնիցը բռնում, բերում  
թագավորի ամարաթը: Տղեն զուստ ձեռը գնում ա դոշին, խորը  
զլուխ տալի, ընդէ կաննում:

— Դե ա՛սա տենամ, իմ ջուղարը դո՞ւ պտի տա:

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, — ասում ա տղեն, — որ  
ասեմ՝ հո չե՞ս փոշմանի:

— Զէ՛, չեմ փոշմանի, — ասում ա թագավորը:

— Ասե՞մ, — թագադան հարցնում ա:

— Ասա՛, — ասում ա թագավորը:

— Ասե՞մ:

— Ասա՛:

— Է՛վ, թագավորն ապրած կենա, հլա կա՛ց մի հեքաթ ասեմ, եննա քու չուղարը կտամ:

— Ասա՛,— ասում ա թագավորը:

«Կընի, ըընի,— ասում ա,— մի թագավոր: Էդ թագավորը ո՛նչ տղա ա ունենում, ո՛նչ աղջիկ, մախլասի՝ ըսկի զադ չի ունենում. ինքն ա ըլնում՝ մի Տուղի-ղուշ: Ո՛վր էթում ա, ի՛նչ անում ա՝ էդ Տուղի-ղշի հեննա ա մասլահաթ տենում: Օրեն մի օրը թագավորը հաց ուտելիս ա ըլնում, էդ Տուղի-ղուշն էլ փանջարումը նստած ա ըլնում, մըն էլ տենում ա՝ մի ուրիշ Տուղի-ղուշ թռավ, էկավ իրա ղշի կուշտը, կտուցը նրա կտցին քսեց, շլնքովը փաթթվեց, էրկսով էլ լաց էլան, եննա ծիծաղացին. էն նոր էկած Ղուշը մի քիչ կաշավ, թռավ, գնաց: Թագավորը էս որ տեհավ, մնաց արմացած:

— էն ի՛նչ Ղուշ էր,— հարցրեց թագավորը, — ընչի՛ վրեն լաց էլաք ու վերջը ընչի՛ վրեն ծիծաղացիք:

— Թագավորն ապրած կենա, — ասեց Տուղի-ղուշը, — էն Ղուշը իմ աղպերն էր. էկավ ասեց. «Հերներս մեռել ա»: է՛հ, սիրտ էր, շիգար էր, մոմուց, լաց էլանք: Եննա էլ ասեց. «Նշան եմ զրվե, թագավորիցը իզին ա՛ռ, ա՛րի հարսանիք»: Դե՛, աղպերս էր, էս որ իմացա՝ ուրախացա, խնդացինք, ծիծաղացինք Թագավորն ապրած կենա, հմի թե իզին կտամ՝ կէթամ, թե չէ հո՛ չէ:

— Գնա՛,— ասեց թագավորը, — համա թե՛զ եդ դառ:

Տուղի-ղուշը թագավորին գլուխ ա տալի, թռնում, էթում: Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շարաթ, օրեն մի օրը էդ Տուղի-ղուշը եղ ա դառնում, զալի: Գալիս ա թագավորին գլուխ ա տալի, կտցիցը մի գունդ թուղթ ա վե քցում: Թագավորը վեր ա ունում, բաց անում, տենում ի՛նչ իրեք հատ խնձորի կորիզ: Կանչում ա իրա կատեպանին, թամրահ թամրահ վրեն անում, թե. «էս իրեք կորիզը կտանես ընենց բելու տեղ կցանես, որ ղուշ, հավ, զադ շմոտանա»: Կատեպանը թագավորին գլուխ ա տալի, կորզները վեր ունում, տանում մի տալդա, ոտից հեռու տեղ ցանում, ոնց որ պետքն էր՝ ջրում, մուղաթ կենում: Անց ա կենում մի քանի վախտ՝ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, մի տարի, էրկու տարի, իրեք տարի, էդ ինձորի կորզները ղուխ են զալի, ամեն մինը մի-մի եքա ժառ դառնում, էնքա՛մ էլ խնձոր են տա-

զի, որ էլ հա՛լ ու հեսար չկար: Օրեն մի օրը թագավորի կատեպանն ասում ա, «Էթամ տենամ խնձորները հասել ա, թե չէ»: Վեր ա կենում, էթում հ իքին, դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, վերջը գալիս ա էդ խնձորներանց տակին կանում, տենում ա կարմրել են, էն ա հա՛ համելու վրա են, վարավուրդ ա անում, տենում գենին մի մենծ կարմիր խնձոր վեր ընկած: Վեր ա ունում, ասում ա, «Տանեմ թագավորին շանց տամա: Դու մի՛ ասի էդ խընձորը օձը յաղել ա: Կատեպանը էթում ա թագավորի ամարաթը, թագավորին ոլում տալի, ընդե կանում:

— Թագավորն ապրած կենա, — ասում ա, — խնձորները հասնելու վրա են. էս մինը ծառի տակին գտա, վե կալա բերի, ա՛ռ տես լա՛վն ա:

Թագավորը խնձորը ձեռիցն առնում ա, տապակ անում, հենց սողում ա դնի բերանը, նազիր-վեզիրը շեն թողում.

— Թագավորն ապրած կենա, — ասում են, — բալի դեղած ա, աղար մի ուրշի տո՛ւ ուտի՛ եննա դու կե՛:

Նազիր-վեզիրը մի ֆորթ են բերիլ տալի, էդ խնձորը քցում աղաքը: Ֆորթը խնձորը ուտելու բաշտան միջիցը տրաքում ա, վեր ընկնում: Թագավորը էս որ տենում ա, հերսոտում ա. էն սհաթը տեղիցը վեր ա կենում, Տուզի-դշի միտը կտրում, քցում էն դիճը. Եննա նազիր-վեզիրին հրամայում ա՝ իրա իրու շորս դիճը մենծ հասար քաշեն, որ մարդ-մաղաթ շմնին էն խնձորիցն ուտի:

Էդ դեղումը մի նախրշի ա ըլնում, ունենում ա մի կնիկ: Էդ նախրշին իրա կնկանը ըսկի օր չէր տալի: Ասսու իրան օրը, գշեցով-գշերհանա վեր էր կենում, կնկանը լավ ջարդում, ծեծում, նոր նախրը տանում հանդը. ընենց էլ իրիկոմը, որ եդ էր գալի, էլի թագադան ծեծում, սալջարդ անում, նո՛ր հաց ուտում, թեք ընկնում քնում: Էդ խեղճ կենկա ճարը կտրվում ա, գշեր, ցերեկ սուց ու շիվան ա անում, մնում ա զլիսի վրեն մոլորած, թե էդ մարդի ձեռիցը ո՞նց պրծնի: Մի օր էլ, որ դանակը ոսկորին ա հասնում, ասում ա. «Ո՞նց անհմ, որ մեռնեմ, էս աշխարքիցը պրծնեմ», բիրգան միտն ա ընկնում, որ թագավորի բալի խնձորները յաղված են, որ մարդ ուտի, ալբիալը կմեռնի: Մարզը որ էթում ա հանդը, փնքն էլ վեր ա կենում, էթում դպա թագավորի բաղեն: Թաղչի շորս պիճը ման ա գալի, դե՛ս ա էթում, դե՛ն ա էթում, տենում ա՝ հրես

մի խռվակ։ Ուսովով էդ խռվակովը մննում ա քաղցեն։ դե՛ս, դե՛ն ա մտիկ տալի, տենում ա մարդ-մադաթ չկա, վրադ-վրազ մի խրն-ձոր քաղում ա, էլ եդ դուս ա գալի, էթում էթում ա, շոլի մեջտե-ղը կաննում։ ասում ա. «Ըստե ուտեմ, որ մարդ շիմանա։ Ուտում ա, պրծնում, տենում ա ի՞նչ՝ հրես դհա ջահելացավ, դառավ ոնց որ մի տասենցինդ տարեկան աղջիկ։ Խեղճ կնիկը մնաց մոլորած, գլխին վա՛յ տալոն։

— Ես կերա, — ասեց, — որ մեռնեմ, պրծնեմ էս աշխարքիցը՝ դհա ջահելացա։

Սուս ու փուս գալիս ա, իրանց դռան աղաքին կաննում։ Իրի-կունը մարդը տուն ա գալի, տենում ա՝ դռանը մի ջահել, սիրուն-աղջիկ կաննած ա, կնկանը չի ճանանշում։ մննում ա տուն, քունչ-ու պումախ ա ընկնում, տենում ա կնիկը տանը լի։ էթում ա հա-րեաններին ա հարցնում, նրանք էլ կնկա տեղը չեն իմանում։ Վեր-ը ճարը կտրած, գալիս ա էդ աղջկանն ա հարցնում։

— Ա՛ղջի, — ասում ա, — էս տան կնկանը հո չե՛ս տեհե։

— Ե՛ս եմ, — ասում ա, — էս տան կնիկը. ի՞նչ ես ուզում։

— Զէ՛, ջա՛նըմ, ի՞նչ ես ասում. իմ կնիկը յաշն առած կնիկ էր, դու ջահել աղջիկ ես։

Աղջիկը երդում, կրակն ա ընկնում, թե. «Ես քու կնիկն եմ, որ քու կնիկն եմ», մարդը չի ավատում։

— Դե՛ որ իմ կնիկն ես, — ասում ա մարդը, — արի՛ էթանը տուն։

— Էթա՛նք, — ասում ա։

Կնկա կոնիցը բռնում ա, քաշ տալի նեքսև։ Տանում ա տուն, տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, մի լավ սրխկում ար, սալշարդ անում, վե քցում, նոր ինքը թեք ա ընկնում, քնում։ Էս խեղճ կնիկը մնում ա գլխին, ոտին տալոն։

— Ես յաշով կնիկ ի, — ասում ա, — մարդս ասսու իրան օրը ծեծում էր, հմի ջահելացա, դհա բեթար ա ծեծում, չեմ գիտա ինչ անեմ, ո՛ր չուրն ընկնեմ, որ պրծնեմ նրա ձեռիցը։

Առավոտը որ լիսանում ա, մարդը նախիրն աղաքն ա անում, էթում հանդը, կնիկը մտքի հեննա ա ընկնում, միտք ա անում, միտք ա անում. վերջն ասում ա. «Էթամ թագավորին գանգատ, ա-ղաշանք անեմ, մարդիս կանչի, խրատի, բալի ինձ չծեծի»։

Դասը-տխուր վեր ա կենում, էթում դուզ թագավորի ամարա-  
թը: Էթում ա թագավորի խնամաքարի վլեն նստում:

Թագավորի նաղիր-վեղիրը դուս են գալի հարցնում: — Ա'յ Կը-  
Նիկ, — ասում են, — ի՞նչ ես ուղում, խի՞ ես էկե:

— Էկել եմ թագավորի կուշտը գանդատ, — ասում ա կնիկը:

Նաղիր-վեղիրն էթում են թագավորին իմաց տալի, թե: — Մի  
ջահել, սիրուն կնիկ էկել ա, ուղում ա քեզ տենա. թո՞ղանք գա,  
թև չէ:

— Թողեք գա, — ասում ա թագավորը, — տենամ ի՞նչ ա ուղում:

Էթում են կնկանը բերում թագավորի կուշտը: Կնիկը թագա-  
վորին զլուխ ա տալի ընդե կաննում:

— Ա'յ կնիկ, — ասում ա թագավորը, — դարտդ ի՞նչ ա, ա'սա  
տենամ:

Խեղճ կնիկը նստում ա բատե մին-մին, տեղը տեղին նազլ ա  
անում իրա զլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նազլ արի: Թագա-  
վորը էս որ լսում ա, մնում ա զարմացած:

— Դրո՞ւտ ես ասում, որ իմ բաղչի խնձորիցը կերար, ջա-  
հելացար, — հարցնում ա թագավորը:

— Դրո՞ւտ, թագա՞վորն ապրած կենա, — ասում ա կնիկը:

Թագավորը էն սհաթը նաղիր-վեղիրին զրկում ա հանգը, որ  
էթան էն նախրշուն կանչեն, բերեն, էթում են, գտնում, կանչում,  
բերում թագավորի կուշտը: Եննա մարդ ա զրկում իրա բաղչի խըն-  
ձորիցը բերիլ տալի. որ բերում են, տալիս ա նախրշուն, ասում ա՝  
կե՛: Նախրշին աղաք չեմ ու չում ա անում, չի ուղում ուտի. համա  
թագավորը որ զոռում ա, վեր ա ունում, ուտում: Ուտում ա թե չէ՝  
ջահելանում ա, զառնում տասնըհինգ տարեկան տղա: Թագավորը  
էս որ տենում ա, մնում ա սառած նախրշու ու նրա կնկա էրեսին  
մտիկ անելոն. շատ ա զլխին վա՛յ տալի, գարտ անում, համա էլ  
ո՛ւր, բանը բանից անց էր կացե: Նախրշուն էլ մի լավ խրատում  
ա, ասում ա՝ կնկանը չենծի, սերով ապրի հեննեն ու էլ եղ ճամ-  
փու դնում իրանց տումը:

— Թագա՞վորն ապրած կենա, — ասում ա իմաստուն տղեն, —  
հմի տե՛ս, ոնց որ էդ թագավորը փոշմանել ա, ընենց էլ դու կփոշ-  
մանես՝ որ տսեմ խի ին ծիծաղում էն ձկները:

— Չե՛, — ասում ա թագավորը, — չեմ փոշմանի, ա'սա:

- Ա'սեմ,— հարցնում ա էլի տղեն:
- Ա'սա,— ասում ա թագավորը:
- Ա'սեմ,— հարցնում ա վրա իրեք հետը:
- Ա'սա,— ասում ա թագավորը:
- Բաս որ ըտենց ա, թագավորն ապրած կենա, քու թագավորությունը իրեք սհաթ պտի տաս ինձ:
- Քեզ փե՛շքաշ ա,— ասում ա թագավորը:
- Էն սհաթը թախտիցը վեր ա գալի, տղին նստացնում իրա տեղը թագավոր: Էդ տղեն ա՝ թագավորին իրա կշտին նստացնում ա, հրամայում ա նազիր-վեզիրը, ամարաթի մարդիրը քոմմա թոփ ըլնեն: Թիրադի կիտվում են, թագավորի չորս դիճը նստոտում: Են-նա տղեն հրամայում ա, որ թագավորի աղջիկը իրա դարավաշներին առնի, գա: Թագավորի աղջիկը դարավաշներով վեր ա կենում, գալի ամարաթի մեջտեղը կանում:
- Ա'ղջի,— ասում ա հերը,— մի՞տդ ա, որ ֆլա՛ն տարին հի-վանդ իր, սիրոտ ձուկն ուզեց, իմ նազիրը գնաց իրեք ձուկը բերեց, համա դու շկերար:
- Թագավորն ապրած կենա,— ասում ա աղջիկը,— դու շնորհիտա, որ ես որձեղենի էրես շեմ ուզում տենամ, ուր մնաց թուտեմ:
- Իմաստում տղեն էս որ լսում ա, հրամայում ա թագավորի աղջկա դարավաշներին տկլորացնեն:
- Թագավորի աղջիկը աղաք ա գալի, չի թողում.— Ո՞նց կը լնի, — ասում ա,— աղջիկ-խիզան են, էսքամի աղաքին ո՞նց շորները հանեն:
- Էդ քու բանը շի,— ասում ա թագավորը:— Հանե՛ք շորնե-րը, — հրամայում ա:
- Հանում են, ի՞նչ տենում՝ դարավաշները քառասունն էլ տղա են: Թագավորը, նազիր-վեզիրը քոմմա մնում են սառած, իրար էրեսի մտիկ անելոն:
- Դե հմի տե՛հար, թագավորն ապրած կենա,— ասում ա իմաստում տղեն,— հմի իմա՞ցար խի ին ծիծաղում էն ձկները:
- Ջա՞նլաթ,— ձեն ա տալի թագավորը:
- Հանլաթները էն սհաթը գալիս են ընդե կանում:
- Էս սհաթին քառասնի գլուխն էլ կտրե՛ք, — հրամայում ա թագավորը:

Զանլաթները բառասնի գլուխն էլ թոցնում են: Եննա թագավորը հրամայում ա՝ իրա աղջկանը տանեն քցեն Մի հացատուն, օրը մի կտոր հաց տան, բանի սաղ ու կենդանի ա՝ ընդե մնա, արևի էրես շտենա: Թագավորը վեր ա կենում էդ իմաստոն տղի ճակատը պաշում, մի բանի բեռը ոսկի ա տալի, էլ եղ ճամփու դնում իրա հոր կուշտը:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝ ասիլ տվողին, մինն էլ՝ անկազ դնողին:

